ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ՀԱԱՀ-ՆԲՄԾՁԲ-25Խ/95 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

05 նոյեմբերի 2025թ.

2025թ-ի նոյեմբերի 03-05-ին ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում, տեղի ունեցավ գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՀԱԱՀ-ՆԲՄԾՁԲ-25Խ/95 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լուսինե Մնացականյան՝	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի աշխատակազմի ղեկավար,
Արամ Հովհաննիսյան՝	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր,
Գրիգոր Հարությունյան՝	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մատակարարման բաժնի պետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լուսինե Մնացականյան: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար՝ Եվա Հարությունյանը - «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի գնումների մասնագետը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման և այլ անհրաժեշտ տեղեկությունների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու և ներկայացված գնային առաջարկի մասին:
2. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հայտարարության տեքստում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
3. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ և ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ և ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ Ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայություններ	-

Ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում՝ Ընթացակարգի հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2025թ-ի նոյեմբերի 3-ի ժամը «12:00»-ին:

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցե, հեռ.	Էլ. փոստ	ՀՎՀՀ
1	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, 8-րդ հարկ Հեռ. (+374) 98 389689	info@promotion.am	00190679

2025թ-ի նոյեմբերի 3-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի /այսուհետ՝ Հրավեր/ պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտում առկա են Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

3. Ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Հրավերով սահմանված վավերապայմաններին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Իրականացնել հայտ/եր/ի գնահատումը Հրավերով սահմանված կարգով (մասնավորապես՝ Հրավերով մասնակցի հայտի գնահատման բանաձև է սահմանված՝ ՄՀԳ = ՄՓՄ + ԱՌՄ, համաձայն, որի գնահատման արդյունքերը բերված են ստորև ներկայացվող աղյուսակում).

N	Մասնակցի անվանում	Մասնագիտական փորձառության միավոր	Աշխատանքային ռեսուրսների միավոր	Մասնակցի հայտի գնահատական
		ՄՓՄ	ԱՌՄ	ՄՀԳ = ՄՓՄ + ԱՌՄ
1	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ	60	40	100

3. Ոչ գնային պայմանների մասով՝ գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին.

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2025թ-ի նոյեմբերի 3-ին Հրավերի 8.1-րդ կետով սահմանված կարգի համաձայն Հանձնաժողովի նախագահը՝ բացեց ընտրված մասնակցի՝ այն մասնակցի ում տրված գնահատականը (ՄՀԳ) ամենաբարձրն է, գնային առաջարկի ծրարը և հայտարարեց ներկայացված գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

Չափաբաժնի		Մասնակցի անվանում	Մասնակցի առաջարկած գները		
N	Անվանում		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայություններ	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ	8,500,000.00	0	8,500,000.00

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ-ի նոյեմբերի 5-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնահատման արդյունքը
1-ին	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ՝	բավարար

2. Որպես Ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ին:

3. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

Չափաբաժնի N	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X"	Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/
1-ին	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ՝	X	8,500,000.00

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը, համաձայն Հավելվածի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրի նախագիծը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակցին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լուսինե Մնացականյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Արամ Հովհաննիսյան _____

Գրիգոր Հարությունյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Եվա Հարությունյան _____